

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 23**  
Վիճակագրության պետական խորհրդի նիստի

15.08.-16-08. 2001թ.

ժ. 11.00

**Մասնակցում էին՝**

Ս. Մնացականյան (*խորհրդի նախագահ*), Գ. Անանյան, Գ. Գևորգյան, Հ. Պետրոսյան, Յու. Պողոսյան (*խորհրդի անդամներ*), Ա. Հարությունյան (*խորհրդի քարտուղար*)

**Հրավիրված էին՝**

Ն. Մուշեղյան (*Ամփոփ վիճակագրության, հրատարակությունների և մարկեթինգի բաժնի պետ*), Կ. Կույումջյան (*Պլանավորման և ծրագրամեթոդաբանական բաժնի պետ*) Ա. Սաֆյանը (*Միջազգային վիճակագրական համագործակցության բաժնի պետ*), Զ.Սիրզոյան (*Մակրոտնտեսական ցուցանիշների և ազգային հաշիվների բաժնի պետ*), Ա. Պետրոսյան (*Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի պետ*), Հ. Տիտիզյան (*Վճարային հաշվեկշռի և արտաքին առևտրի բաժնի գլխավոր մասնագետ*), Ա. Շաբոյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի պետ*), Ս. Ներսիսյան (*Մարդահամարի վարչության պետ*), Գ. Գյուրջյան (*Վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի գլխավոր մասնագետ*)

**Օրակարգի նախագծում` ութ հարց.**

1. Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին Կարգը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

2. ՀՀ 2001թ. մարդահամարը օդանավակայաններում և ավտոկայաններում անցկացնելու կարգի մասին Ցուցումները հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

3. Հրահանգիչ-հսկիչի/ձև 14/, Մարդահամարի տեղամասի վարիչի/ձև 15/ հաշվետվությունները և Ուղեկցող թերթը/ձև 10/ հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

4. Քաղաքային հաշվային տեղամասի /ձև 6-քաղաքային /, Գյուղական վայրի հաշվային տեղամասի /ձև 6-գյուղական /, Հրահանգչական տեղամասի /ձև 7/, Մարդահամարի տեղամասի /ձև 8, ձև 8-ի հավելված/ Մարզի (տարածքի) /ձև 9/ ամփոփ տեղեկագրերը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

5. Քաղաքներում հաշվարարի(ձև 11-քաղաքային), Գյուղական վայրում հաշվարարի (ձև 11-գյուղական), Գյուղական վայրում հրահանգիչ-հսկիչի (ձև 12-գյուղական), Քաղաքներում հրահանգիչ-հսկիչի (ձև 12-քաղաքային), Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի (ձև 13) Հուշատետրերը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

6. “Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության /ձև ԲԿԾ-2/” և “Ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտության /ձև ԲԿԾ-2/” հարցաթերթերը և “Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության հարցաթերթի լրացման կարգի մասին Հրահանգը” հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Գ. Անանյան/*

7. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.

7.1 Հաշվետվություն 2001թ մայիսի 28-30-ը Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կայացած ազգային հաշիվների կառուցման խնդիրներին նվիրված սեմինարի վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Ջ. Միրզոյան/*

7.2 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 2-6-ը Ազգային հաշիվների գծով Հունգարիայի կենտրոնական վիճակագրական բյուրո /ք. Բուդապեշտ/ կատարած այցելության վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Ջ. Միրզոյան, Ա. Շարոյան/*

7.3 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 4-6-ը Գերմանիայի Վիսբադեն քաղաքում կայացած արտաքին առևտրի վիճակագրության մեթոդաբանական հարցերի քննարկման և հայելային վիճակագրության վարման թեմաներով աշխատանքային հանդիպման արդյունքների վերաբերյալ.  
*/Ներկայացնող՝ Ա. Պետրոսյան, Հ. Տիտիզյան/*

7.4 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 9-14-ը Բուլղարիայի Ազգային վիճակագրական ինստիտուտ կատարած այցելության վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ս. Ներսիսյան/*

7.5. Հաշվետվություն 2001թ. մայիսի 21-ից հունիսի 29-ը Վաշինգտոնում /ԱՄՆ/ կազմակերպված “Զբաղվածության և գործազրկության գնահատում” ուսումնական դասընթացին մասնակցության վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Ա. Հայրապետյան/*

## 8. Այլ հարցեր

ՀՀ Վիճակագրության պետական խորհրդի նախագահ Ս. Մնացականյանի կողմից ներկայացվեց խորհրդի նիստի օրակարգի նախագիծը: Հաշվի առնելով պարոն Հայրապետյանի գործուղման մեկնելու հանգամանքը՝ Խորհրդի նախագահ պարոն Մնացականյանի կողմից առաջարկվեց “2001թ մայիսի 21-ից հունիսի 29-ը Վաշինգտոնում /ԱՄՆ/ կազմակերպված “Զբաղվածության և գործազրկության գնահատում” ուսումնական դասընթացին մասնակցության վերաբերյալ” հարցի քննարկումը տեղափոխել հաջորդ նիստի օրակարգ: Պարոն Մնացականյանի կողմից առաջարկվեց նաև հրավիրել վիճակագրական աշխատանքների մեթոդաբանության բաժնի մասնագետներին այն նկատառումով, որ նիստի օրակարգն ակադեմիկ է առավելապես նորմատիվ բնույթի փաստաթղթերի նախագծերով: Խորհրդի 15.08.01թ. նիստի օրակարգի նախագիծը հաստատվեց համապատասխան փոփոխությամբ և միաձայն:

*/Զվեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## Լսեցին՝

1. Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին Կարգը հաստատելու մասին.

*/Զեկուցող՝ Ն. Մուշեղյան/*

Նշվեց, որ «Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին» կարգը մշակվել է “Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի դրույթներին համապատասխան և սահմանում է վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերը, ինչպես նաև դրա հետ կապված հրատարակությունների կազմակերպման կարգը և դրանց շուրջ ծագող հարաբերությունները: Նշված փաստաթուղթը քննարկվել է ՎՊԽ անդամների հետ, որից հետո ներկայացվում է ՀՀ ՎՊԽ հաստատմանը:

Գիտողություններ և առաջարկություններ.

Ս. Մնացականյան - երրորդ բաժնի 10-րդ կետը փոխարինել հետևյալ ձևակերպմամբ. “Որպես հանրային շահ հետապնդող մարմնի /”Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքի 6-րդ հոդված/ ՀՀ ԱՎԾ-ի, կողմից հրապարակված /հրատարակված/ վիճակագրական տեղեկատվություն սպառողների /օգտագործողների/ ցանկը չի սահմանափակվում: Այդպիսիք կարող են լինել ինչպես ՀՀ ռեզիդենտների, այնպես էլ ոչ ռեզիդենտների տարատեսակությունները”:

-12-րդ կետի երկրորդ պարբերությունը հանել,

-13-րդ կետի առաջին պարբերությունը հանել

Յու. Պողոսյան - առաջին կետը խմբագրել հետևյալ կերպ. “Սույն կարգը մշակված է “Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի համաձայն և սահմանում է վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերը, հրատարակությունների կազմակերպման կարգը և նկարագրում դրանց շուրջ ծագող հարաբերությունները”,

- Կարգի 8-րդ կետի առաջին պարբերությունը հանել,

-15-րդ կետի հինգերորդ պարբերության վերջում ավելացնել “Ճշգրտման ենթակա տեղեկությունների մասին հրապարակում է համարվում նաև մեթոդաբանական պարզաբանումներում կատարված նշումները” նախադասությունը,

-20-րդ և հետագա բոլոր կետերում “տեղեկատվական-վերլուծական” բառերը փոխարինել “վիճակագրական” բառով,

Գ. Գյուրջյան - 11-րդ կետի երրորդ պարբերության վերջում ավելացնել “և այդ ոլորտի հարաբերությունները կարգավորվում են “Հեղինակային իրավունքի և հարակից իրավունքների մասին” ՀՀ օրենքով սահմանված կարգով” արտահայտությամբ:

## Որոշեցին՝

1. հաստատել “Վիճակագրական տեղեկատվության հրապարակման ձևերի մասին կարգի” դիտողություններով և առաջարկություններով լրամշակված տարբերակը/կցվում է/,

2. սահմանել, որ կարգում բերված վիճակագրական հրապարակումների դասակարգումների նոր համակարգն ուժի մեջ է մտնում 2002 թվականից,

3. սահմանել, որ սույն որոշման առաջին կետով հաստատված կարգի 23-րդ կետին համապատասխան, բաժանորդագրության միջոցով հրատարակությունների տարածման կարգը, ինչպես նաև ընդհանրապես վճարովի վիճակագրական ծառայությունների մատուցման կարգը, գործելու է “Պետական վիճակագրության մասին” ՀՀ օրենքի 14-րդ հոդվածի 15-րդ մասին համապատասխան մշակվող՝ վճարովի վիճակագրական ծառայությունների մատուցման համար վճարի հաշվարկման, վճարման և միջոցների օգտագործման կարգը ՀՀ կառավարության կողմից հաստատվելուց հետո:

*/Քվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

2. ՀՀ 2001թ. մարդահամարը օդանավակայաններում և ավտոկայաններում անցկացնելու կարգի մասին Ցուցումները հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

Նշվեց, որ օդանավակայաններում և ավտոկայաններում ՀՀ 2001թ. մարդահամարի նախապատրաստման և անցկացման աշխատանքները իրականացնելու նպատակով նշված փաստաթուղթը ներկայացվում է Խորհրդի հաստատմանը:

Առաջարկություններ և դիտողություններ.

Գ. Գյուրջյան –նշված հաշվառումն առավել օպերատիվ և արդյունավետ անցկացնելու նկատառումով նպատակահարմար է այն իրականացնել անմիջապես սահմանային կետերում, ուստի և սույն փաստաթուղթն անհրաժեշտ է փոփոխել վերը նշված ենթատեքստով /առաջարկությունն ընդունվեց/:

## **Որոշեցին՝**

հանձնարարել Մարդահամարի վարչությանը Խորհրդի նիստում արված առաջարկությունների և դիտողությունների տեսանկյունով փոփոխել և լրամշակել “ՀՀ 2001թ. մարդահամարը օդանավակայաններում և ավտոկայաններում անցկացնելու կարգի մասին Ցուցումները” և պատրաստ լինելուն պես ներկայացնել Խորհրդի անդամներին:

*/արձանագրային/*

*/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

3. Հրահանգիչ-հսկիչի/ձև 14/, Մարդահամարի տեղամասի վարիչի/ձև 15/ հաշվետվությունները և Ուղեկցող թերթը/ձև 10/ հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

Նշվեց, որ Խորհրդի նիստին ներկայացված փաստաթղթերի քննարկումների արդյունքում կատարված փոփոխություններով խմբագրված տարբերակները ներկայացվում են Խորհրդի հաստատմանը:

## **Որոշեցին՝**

հաստատել Հրահանգիչ-հսկիչի/ձև 14/, Մարդահամարի տեղամասի վարիչի/ձև 15/ հաշվետվությունները և Ուղեկցող թերթը/ձև 10/ (կցվում են):

*/Բվեարկության արդյունքները – կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

4. Քաղաքային հաշվային տեղամասի /ձև 6-քաղաքային /, Գյուղական վայրի հաշվային տեղամասի /ձև 6-գյուղական /, Հրահանգչական տեղամասի /ձև 7/, Մարդահամարի տեղամասի /ձև 8, ձև 8-ի հավելված/ Մարզի (տարածքի) /ձև 9/ ամփոփ տեղեկագրերը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

Նշվեց, որ Խորհրդի նիստին ներկայացված ամփոփ տեղեկագրերը քննարկումների արդյունքում կատարված փոփոխություններով խմբագրվելուց հետո ներկայացվում են Խորհրդի հաստատմանը:

Ա. Շաբոյան – ձև 9-ում 7-րդ կետը խմբագրել՝ հաշվի առնելով Խորհրդի նիստի օրակարգի երկրորդ հարցի վերաբերյալ արված դիտողություններն ու առաջարկությունները /առաջարկությունն ընդունվեց/

## **Որոշեցին՝**

հանձնարարել մարդահամարի վարչությանը խմբագրել Մարզի (տարածքի) /ձև 9/ ամփոփ տեղեկագրի “Ցուցումներ մարզի /տարածքի/ ամփոփ տեղեկագիրը լրացնելու վերաբերյալ” բաժնի 7-րդ կետը Խորհրդի նիստի օրակարգի երկրորդ հարցին վերաբերող դիտողությունների և առաջարկությունների ենթատեքստով

*/արձանագրային/*

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

հաստատել Քաղաքային հաշվային տեղամասի /ձև 6-քաղաքային /, Գյուղական վայրի հաշվային տեղամասի /ձև 6-գյուղական /, Հրահանգչական տեղամասի /ձև 7/, Մարդահամարի տեղամասի /ձև 8, ձև 8-ի հավելված/ Մարզի (տարածքի) /ձև 9/ ամփոփ տեղեկագրերը (կցվում են):

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

5. Քաղաքներում հաշվարարի(ձև 11-քաղաքային), Գյուղական վայրում հաշվարարի (ձև 11-գյուղական), Գյուղական վայրում հրահանգիչ-հսկիչի (ձև 12-գյուղական), Քաղաքներում հրահանգիչ-հսկիչի (ձև 12-քաղաքային), Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի (ձև 13) Հուշատետրերը հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Կ. Կույումջյան/*

Նշվեց, որ ներկայացված Հուշատետրերը ՀՀ ԱՎԾ համապատասխան ստորաբաժանումներում անցկացված քննարկումներից հետո ներկայացվում են ՀՀ ՎՊԽ հաստատմանը:

Ս. Մնացականյան – խմբագրական բնույթի դիտողություններ

## **Որոշեցին՝**

հաստատել Քաղաքներում հաշվարարի(ձև 11-քաղաքային), Գյուղական վայրում հաշվարարի (ձև 11-գյուղական), Գյուղական վայրում հրահանգիչ-հսկիչի (ձև 12-գյուղական), Քաղաքներում հրահանգիչ-հսկիչի (ձև 12-քաղաքային), Մարդահամարի տեղամասի վարիչի և նրա օգնականի (ձև 13) Հուշատետրերի խմբագրված տարբերակները (կցվում են):

*/Քվեարկության արդյունքները- կողմ՝5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

6. “Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության /ձև ԲԿԾ-2/” և “Ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտության /ձև ԲԿԾ-2/” հարցաթերթերը և “Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության հարցաթերթի լրացման կարգի մասին Հրահանգը” հաստատելու մասին.

*/Ձեկուցող՝ Գ. Անանյան/*

Նշվեց, որ բնակչությանը կենցաղային ծառայություններ մատուցող կազմակերպությունների և անհատ ձեռնարկատերերի ընտրանքային հետազոտության հարցաթերթերը և դրանց լրացման կարգի մասին Հրահանգը մշակվել են այդ բնագավառում հետազոտություն անցկացնելու միջոցով ամբողջական և հավաստի տեղեկատվություն ստանալու նպատակով: Վերջիններս հավանության են արժանացել միջազգային փորձագետների կողմից:

Ա. Շաբոյան – Հրահանգի 1.5.1 կետում “ծառայությունների” բառից հետո ավելացնել “ծավալ” բառը

## **Որոշեցին՝**

հաստատել “Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության /ձև ԲԿԾ-2/” և “Ծառայություններ մատուցող անհատ ձեռնարկատերերի

ընտրանքային հետազոտության /ձև ԲԿԾ-2/” հարցաթերթերը և “Ծառայություններ մատուցող կազմակերպությունների ընտրանքային հետազոտության հարցաթերթի լրացման կարգի մասին Հրահանգը”/կցվում է/:

*/ԲՎեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## **7. Հաղորդում արտասահմանյան գործուղումների հաշվետվությունների մասին.**

6.1 Հաշվետվություն 2001թ մայիսի 28-30-ը Սանկտ-Պետերբուրգ քաղաքում կայացած ազգային հաշիվների կառուցման խնդիրներին նվիրված սեմինարի վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Ջ. Միրզոյան/*

6.2 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 2-6-ը Ազգային հաշիվների գծով Հունգարիայի կենտրոնական վիճակագրական բյուրո /ք. Բուդապեշտ/ կատարած այցելության վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Ջ. Միրզոյան, Ա. Շաբոյան/*

6.3 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 4-6-ը Գերմանիայի Վիսբադեն քաղաքում կայացած արտաքին առևտրի վիճակագրության մեթոդաբանական հարցերի քննարկման և հայելային վիճակագրության վարման թեմաներով աշխատանքային հանդիպման արդյունքների վերաբերյալ.  
*/Ներկայացնող՝ Ա. Պետրոսյան, Հ. Տիտիզյան/*

6.4 Հաշվետվություն 2001թ. հուլիսի 9-14-ը Բուլղարիայի Ազգային վիճակագրական ինստիտուտ կատարած այցելության վերաբերյալ  
*/Ներկայացնող՝ Գ. Գևորգյան, Ս. Ներսիսյան/*

## **Որոշեցին՝**

բոլոր հաշվետվությունների վերաբերյալ հաղորդումն ընդունել ի գիտություն:

*/արձանագրային/*

*/ԲՎեարկության արդյունքները- կողմ՝ 5, դեմ՝ 0, ձեռնպահ՝ 0/*

## **6. Այլ հարցեր**

Նախագահ

Ս. Մնացականյան

Քարտուղար

Ա. Հարությունյան